Մեդիա խմբակի ծրագիր

Խմբակի անվանումը՝ «Ես մեդիագրագետ եմ»

Աբովյանի N 2 հիմնական դպրոց

Տնօրեն՝ Ա. Տաշչյան

Խմբակի ղեկավար՝ Հասմիկ Հայրապետյան

Ծրագրի կազմող՝ Հասմիկ Հայրապետյան

Խմբակի տևողությունը՝ շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ

(տեսական՝ 23 ժամ, գործնական՝ 45 ժամ)

Խմբակի մասնակիցներ՝ 7-9-րդ դասարանների աշակերտներ

Դասընթացի հիմնական բովանդակությունը ներառում է հետևյալ ոլորտները՝

- Մեդիայի ասելիքն ու կենսագրությունը,
- Մեդիայի ազատությունն ու սահմանները,
- Տպագիր մեդիա,
- Ձայնը և մեդիան,
- Պատկերը և մեդիան,
- Նոր մեդիա: Ես՝ որպես մեդիագրագետ քաղաքացի:
  - Google-ի կրթական գործիքները
  - Smart Notebook ծրագրի ուսուցում
  - PowerPoint ծրագրի ուսուցում

Նախագծի ստեղծում՝

Դասընթացի անցկացումը ենթադրում է համակարգչային տեխնիկայի, էլէկտրոնային գրատախտակի կիրառում, որով հագեցած է դպրոցը: Այդ ամենը կնպաստի մեդիա քննադատության ուսուցմանն մեդիա արտադրանք պատրաստելու միջոցով: Ծրագրում ներառված են այն թեմաները, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու նպաստելու են գործնականում ՏՀՏ գործիքների ճիշտ և նպատակային օգտագործմանը: Ծրագիրը նախատեսված է 12-15 տարիքային խմբերի համար:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների, հմտությունների զարգացման և գործնական աշխատանքների վրա:

Խմբակի աշխատանքներում կարևորվում է թիմային աշխատանքը և համագործակցությունը որևէ վստահելի, էթիկական ու որակյալ լրատվամիջոցի կամ լրագրողի հետ, ծրագրում ներառված են լրագրության, խոսքի ազատության ու մեդիայի մասին ֆիլմերի դիտում-քննարկումներ:

Խմբակի աշխատանքների արդյունավետությունը ստուգելու նպատակով յուրաքանչյուր թեմայի ավարտից հետո սովորողները խմբերով ցուցադրելու են իրենց կատարած աշխատանքները և գնահատվելու են, իսկ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին խմբակի ղեկավարը ներկայացնելու է հաշվետվություն կատարած աշխատանքների և արդյունքների վերաբերյալ: Հաշվետվությունը ներկայացվում է գործնական աշխատանքի ձևով սովորողների կողմից, իսկ խմբակի ղեկավարի կողմից գրավոր հաշվետվություն է ներկայացվում տնօրինությանը:

Դասընթացը կխթանի դպրոցում գործող «Դարանի TV», «Կրթազրույց» և «Դարանի» ամսաթերթի աշխատանքների գործիքակազմի բարելավմանն ու թիմի համալրմանը: Խմբակի աշակերտները կշարունակեն ստեղծել կրթական, տեղեկատվական, ճանաչողական ու ժամանցային նյութեր:

Որպես գնահատման միջոց կլինեն մրցույթներն ու նախագծային աշխատանքները:

Խմբակի նպատակ՝

Մեդիականացված աշխարհում ապահով, արդյունավետ, օգտակար ու հետաքրքիր ապրելու համար մեզ նոր տիպի գրագիտություն է անհրաժեշտ:

- Աշակերտը իմանա, թե ինչ է մեդիան, ինչու է կարևոր հասկանալ մեդիայի աշխատանքը, նպատակները, մեթոդները:

- Ծանոթացնել աշակերտներին, թե որոնք են մեդիայի ուղերձները, և ինչ է մեդիագրագիտությունը։
- Աշակերտների մոտ զարգացնել տեխնոլոգիական հմտությունները, ինքնուսուցման և ինքնադրսևորման կարողությունները։
- Աշակերտների մոտ զարգացնել հետաքրքրություններ տարբեր ժամանակաշրջանների տեղեկատվության պահպանման համակարգերի մասին։ Ավելի կարևոր է, որ նրանք պետք է հասկանան այն մարտահրավերները կամ սկզբունքները, որոնք հանգեցրել են այդ համակարգերի ստեղծմանը, և որ այդ համակարգերը որոշակիորեն, կամայականորեն ստեղծվել են ընդհանուր խնդիր լուծելու համար։
- Աշակերտը տիրապետի մեդիագրագիտության և անվտանգության հիմնական կանոններին՝ հասկանալով դրանց հետ կապված վտանգները։ Կարողանա նշել իրական և մեդիա միջավայրերի տարբերությունները՝ մեդիայից ստացված տեղեկատվությունը համադրելով իրական կյանքին, ունենա քննադատական և վերլուծական մտածողություն։
- Թվային գրագիտություն դասընթացի նպատակն է պատրաստել և ոգևորել առավել մեծ թվով աշակերտների՝ ընտրելու ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ։
- Աշակերտներին ակտիվորեն ներգրավել դասանցկացման պրոցեսին, նրանց մասնակից դարձնել դասավանդման ու ինֆորմացիայի փոխանակման ընթացքին (օրինակ՝ հանձնարարել նրանց՝ դասի բոլոր մասնակիցների համար բացել դասընթացի բլոգը, կամ մոնտաժել ու ինտերնետում տեղադրել տեսանյութ)։ Այդպիսով՝ աշակերտներն իրենց ավելի կարևորված ու ներգրավված կզգան և կօգնեն ուսուցչին։

Խնդիրներ՝

- Ուսուցման համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունները և այդ միջավայրի կիրառումը էլեկտրոնային դասընթացի ստեղծման, կազմակերպման և կառավարման գործընթացում։
- Աշակերտներին հնարավորություն տալ իրենց առջև դրված խնդիրներին տալ ստեղծագործական լուծումներ։

Վերջնարդյունք՝

- Իմանա մեդիայի ժամանակակից ընկալումն ու սահմանումը, դերը:
- Հասկանա մեդիագրագիտության անհրաժեշտությունը:
- Գնահատի իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծի պատճառահետևանքային կապերը և կայացնի որոշումներ:
- Ճանաչի տեղեկատվական աղբյուրների ու միջոցների բազմազանությունը, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ:
- Տիրապետի թվային տարածքում ապահով գտնվելու կանոններին:
- Ստեղծի մեդիա բովանդակություն և կարողանա տարածել իր ասելիքը մեդիայի տարբեր հարթակներում՝ գիտակցելով դրա հետևանքներն ու ազդեցությունը, պահպանելով էթիկան և համացանցից օգտվելու անվտանգության կանոնները:

Թեմա 1	**Մեդիայի ասելիքն ու կենսագրությունը / 4 ժամ**
Նպատակը	• Նախատեսվում է աշակերտներին գիտելիքներ տալ տարբեր դարաշրջաններում տեղեկատվության, պահպանման, մշակման գործընթացի մասին: • Աշակերտների մոտ զարգացնել հետաքրքրություններ տարբեր ժամանակաշրջանների տեղեկատվության պահպանման համակարգերի մասին: Ավելի կարևոր է, որ նրանք պետք է հասկանան այն մարտահրավերները կամ սկզբունքները, որոնք հանգեցրել են այդ համակարգերի ստեղծմանը, և որ այդ համակարգերը որոշակիորեն, կամայականորեն ստեղծվել են ընդհանուր խնդիր լուծելու համար:
Վերջնարդյունքը	• Նկարագրի մեդիայի զարգացման պատմությունը, ժամանակակից ընկալումն ու սահմանումը, տալ ներկա դաշտի կառուցվածքը:

	• Գնահատի տեղեկատվության նյութը՝ կախված աղբյուրներից ու լսարանից:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ նոթատետր, բառարան, համակարգչային ճժանդակ տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 2 ժամ
Հղումներ	1.«Մեդիան և մեդիագրագիտությունը» բաժնի առաջին մասը՝ «Մեդիա iգիտություն» ձեռնարկում, 2.«Մեդիայի ասելիքը» «Մեդիագրագիտություն» ձեռնարկում, 3. «Մեդիամարտ» խաղ, թեմա 1:

Թեմա 2	**Մեդիայի ազատությունն ու սահմանները/10 ժամ**
Նպատակը	• Ծանոթացնել հաղորդակցման ձևերի կիրառությանն: • Ձևավորել գիտելիքներ խոսքի ազատություն և մտքի ազատություն եզրույթների վերաբերյալ: • Աշակերտի մոտ զարգացնել քննադատական մտածողությունը: • Ծանոթացնել ԶԼՄ-երի օգտագործած մանիպուլյացիոն հնարքներին:
Վերջնարդյունքը	• Աշակերտը գտնի և նկարագրի, թե ինչպես են մարդիկ օգտագործում տեխնոլոգիաների բազմաթիվ տեսակներ իրենց առօրյա անձնական և աշխատանքային կյանքում: • Գնահատի թվային աղբյուրների ճշգրտությունը, տեղին և հարմար լինելը: • Բացատրի, թե ինչպես է մեդիան ազդում մեր մտքերի, զգացմունքների և վարքի վրա:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ֆիլմի դիտում-քննարկում (ինչպես է պատրաստվում գովազդը):

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Հղումներ	1.«Մեդիամարտ» խաղ, թեմա 2 2.«Հաղորդակցության էվոլյուցիան» բաժինը «Մեդիա iգիտություն» ձեռնարկում, 3.«Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու», Այդին Մորիկյան:

Թեմա 3	**Տպագիր մեդիա/10 ժամ**
նպատակը	• Աշակերտներին ծանոթացնել մամուլի աշխատանքին: • Աշակերտի մոտ ձևավորել պարբերականների նյութերը վերլուծելու կարողունակություն: • Հասկանալ տպագիր մեդիայի դաշտն ու առանձնահատկությունները:
Վերջնարդյունք	• Նկարագրի՝ ինչպես են մարդիկ նույն աշխատանքներն իրականացրել մինչև այս տեխնոլոգիաների գոյությունը: • Կարողանա որևէ հետաքրքիր թեմայով պատրաստել հոդված: • Պատկերացնի տպագիր մամուլի դերը Հայաստանում այսօր և նախկինում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դպրոցում գործող «Դարանի» թերթում որևէ հետաքրքիր նյութի տպագրություն: Այցելություն որևէ թերթի հրատարակչություն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 6 ժամ
Հղումներ	1.«Մեդիամարտ» խաղ, թեմա 6 , 2.«Մեդիայի վարպետությունն ու հնարքները» «Մեդիա iգիտություն» ձեռնարկում, 3. «Տպագիր մեդիա» «Մեդիագրագիտություն» ձեռնարկում, 4.«Ժուռնալիստիկա. ինչ, ինչպես, ինչու», Այդին Մորիկյան:

Թեմա 4	**Ձայնը և մեդիան/ 8 ժամ**
Նպատակ	• Աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ ռադիոյի աշխատանքի և այս մեդիայի առանձնահատկությունների մասին: • Աշակերտների համար բացահայտել մեդիա բաղադրիչների նշանակությունն ու արտահայտչամիջոցները: • Հասկանալ ձայնային մեդիայի առանձնահատկությունը և ձևաչափերը, ստեղծել ձայյնային նյութեր:
Վերջնարդյունք	• Լսել ռադիոնյութի ծրագիր և քննարկել դրա կառուցվածքը: • Խմբային աշխատանքի միջոցով որևէ հետաքրքիր թեմայի շուրջ պատրաստել ձայնային ակնարկ և փոքրիկ ռադիոհաղորդում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական դասեր, այցելություն «Sputnik» ռադիո, ձայնագրում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ
Հղումներ	1.«Ձայնը եւ մեդիան», «Մեդիագրագիտություն» ձեռնարկում, 2.«Մեդիայի վարպետությունն ու հնարքները», «Մեդիա ւգիտություն» ձեռնարկում, 3. «Մեդիամարտ» խաղ, թեմա 7, 4. «Փոդքասթինգ» դասընթացի ձեռնարկ https://media.am/hy/lab/2021/07/05/28734/

Թեմա 5	**Պատկերը և մեդիան/ 12 ժամ**
Նպատակ	• Հասկանալ վիզուալ մեդիայի նշանակությունն ու ազդեցությունը և

	կարողանալ ստեղծել գրագետ լուսանկարներ ու տեսանյութեր: • Աշակերտին ծանոթացնել հեռուստատեսության աշխատանքին, նկարահանման և հեռուստամոնտաժի սկզբունքներին: • Ձևավորել գիտելիքներ հեռուստատեսային էթիկայի վերաբերյալ:
Վերջնարդյունք	• Կարողանան տարբերակել մեդիայի տեսակները: • Աշակերտները մշակեն և ներկայացնեն հեռուստատեսային որևէ նախագիծ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Դիտել և քննարկել «մեկ օր հեռուստատեսությունում» տեսանյութը: Այցելություն որևէ հեռուստաընկերություն: Գործնական դասերը խմբակի անդամ աշակերտները կկառուցեն դպրոցում գործող «Դարանի TV» և «Կրթազրույց» հաղորդումների աշխատանքների միջոցով. կպատրաստեն և իրենք կվարեն հաղորդումներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական ուսուցում՝ 8 ժամ
Հղումներ	1.«Պատկերը եւ մեդիան», «Մեդիագրագիտություն» ձեռնարկում , 2.«Մեդիայի վարպետությունն ու հնարքները», «Մեդիա iգիտություն» ձեռնարկում, 3 «Մեդիամարտ» խաղ, թեմա 8, 4.«Հեռուստատեսային պատկերը և իրականությունը», Լ.Քալանթար, «Մեդիագրագիտություն» ձեռնարկում

Թեմա 6	**Նոր մեդիա: Ես՝ որպես մեդիագրագետ քաղաքացի/6 ժամ**
Նպատակ	• Ծանոթացնել արդի զարգացող տեխնոլոգիաներին լայն իմաստով՝

	ներառելով դրանց կիրառությունը տարբեր ոլորտներում: • Զարգացնել աշակերտների գիտելիքները ինտերնետի և մեդիայի նոր հնարավորությունների մասին: • Գնահատել համացանցի ազդեցությունը մարդու կյանքում, նաև լրատվության ու լրատվամիջոցների վրա: • Աշակերտների մոտ ձևավորել ինտերնետի վտանգներից խուսափելու և նոր մեդիան ճիշտ օգտագործելու կարողունակություններ: • Աշակերտներին ծանոթացնել սոցիալական ցանցերի գաղտնիության կարգավորումներին: • Օրինակներով բացատրել, թե ինչպես է հնարավոր պայքարել ինտերնետում առկա ֆեյք նորությունների, մանիպուլյացիաների և քարոզչությունների դեմ: • Զարգացնել կարողունակություններ թվային անվտանգության և մեդիա հիգիենայի վերաբերյալ:
Վերջնարդյունք	• Կարողանա պահպանել գաղտնիությունը և տվյալները սոցիալական մեդիայում: • Կարողանա բացատրել ինտերնետ ապահովության և անհատական տվյալների գաղտնիության գաղափարները: • Իմանա սոցիալական ցանցի վեբկայքերի օգտագործման դրական եղանակները: • Իմանալ վեբ միջավայրում սոցիալական ցանցերի, բլոգների, փոդքասթների և տեսաբլոգների միջոցով ինքնաներկայացման հիմունքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական աշխատանքներ, համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ: Ֆիլմեր ինտերնետի վտանգների և կանոնների մասին:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական ուսուցում՝ 4 ժամ

Հղումներ	1.«Նոր մեդիա», «Մեդիագրագիտություն» ձեռնարկում, 2.«Մեդիայի տրանսֆորմացիան եւ մարդ-մեդիա ֆենոմենը» բաժնի առաջին մասը, «Մեդիա iգիտություն» ձեռնարկում, 3. «Մեդիամարտ» խաղ, թեմա 9, 4. Մուլտիմեդիա ժանրեր և օրինակներ- https://media.am/hy/lab/2011/10/10/816/

Google-ի կրթական գործիքները	6 ժամ	Տեսական՝ 1 ժամ Գործնական՝ 5 ժամ
Smart Notebook ծրագրի ուսուցում	6 ժամ	Տեսական՝ 1 ժամ Գործնական՝ 5 ժամ
PowerPoint ծրագրի ուսուցում	6 ժամ	Տեսական՝ 1 ժամ Գործնական՝ 5 ժամ

Ծրագրի նպատակը և խնդիրները՝